

Աշխարհագրություն առարկայի հանրապետական օլիմպիադա - 2019-2020թթ.
Դպրոցական փուլ /տևողությունը – 90 րոպե/

9—րդ դասարան

Ընտրովի պատասխանով առաջադրանքներ

1. **Տարածքով գերխոշոր պետություն է: Չափազանց հարուստ է ջրային և անտառային ռեսուրսներով: Աչքի է ընկնում երկաթաքարի արդյունահանմամբ և արտահանմամբ: Ո՞ր պետությունն է.**
 1. Հնդկաստան
 2. Ավստրալիա
 3. Բրազիլիա
 4. Չինաստան
2. **Աշխարհագրական լայնությունները լինում են .**
 1. 0-180°
 2. 0-90°
 3. 0-270°
 4. 0-360°
3. **Եթե քարտեզի անվանական մասշտաբը 1սմ-ում 2000 մետր է, ապա թվային մասշտաբը կլինի.**
 1. 1:2000
 2. 1:20 000
 3. 1:200 000
 4. 1:2 000 000
4. **Հորիզոնի ո՞ր կողմում չի լինում լիալուսինը.**
 1. հյուսիսային
 2. արևմտյան
 3. արևելյան
 4. հարավային
5. **«Պետություն- մայրցամաք» գույգերից ընտրել սխալը.**
 1. Լիտվա-Եվրասիա
 2. Էկվադոր-Հարավային Ամերիկա
 3. Գանա-Աֆրիկա
 4. Բուրան-Հյուսիսային Ամերիկա
6. **Միջօրեականի մասին ո՞ր պնդումն է ճիշտ .**
 1. Ամենաերկարը 0° միջօրեականն է,
 2. Ամենաերկարը 90° միջօրեականն է,
 3. Ամենաերկարը 180° միջօրեականն է,
 4. Բոլորն իրար հավասար են:
7. **Չինացիների ազգային կրոնն է.**
 1. սինթոիզմը,
 2. դաոսիզմը,
 3. հուդայականությունը,
 4. հինդուիզմը:
8. **Հրաբխային ծագման ապար չէ.**
 1. պեմզան
 2. օբսիդիանը
 3. մարմարը
 4. խարամը
9. **Տեխնիկական մշակաբույս է.**
 1. կարտոֆիլը
 2. արևածաղիկը
 3. եգիպտացորենը
 4. վարսակը
10. **ՆԱԵԿ-ի անդամ երկիր չէ.**
 1. Վենեսուելան
 2. Քուվեյթը
 3. Ինդոնեզիան
 4. Ղազախստանը

11. ՀՀ տարածքում տրված ջրամբարներից ո՞րն է ամենախոշորը.

1. Կեչուտի
2. Արփի լճի
3. Տոլորսի
4. Սպանդարյանի

12. Ո՞ր պնդումն է սխալ.

1. վերարտադրությունը կոչվում է պարզ, եթե ծնելիությունը հավասար է մահացությանը,
2. զարգացող երկրներին բնորոշ է նեղ հիմքով, համեմատաբար լայն գագաթով սեռատարիքային բուրգը,
3. եվրոպական երկրներին բնորոշ է բնակչության վերարտադրության առաջին տիպը,
4. զարգացած երկրների բնակչության սեռային կազմում կանանց թիվը գերազանցում է տղամարդկանց թվին:

13. Գունավոր մետաղաձուլության ենթաճյուղերից ՀՀ-ում զարգացած չէ.

1. ցինկի արդյունաբերությունը,
2. պղնձաձուլությունը,
3. մոլիբդենի արդյունաբերությունը,
4. ոսկու արդյունաբերությունը:

14. Արաքս գետի մասին ո՞ր պնդումն է սխալ.

1. ստորին հոսանքում հոսում է դաշտավայրով,
2. ձախակողմյան վտակներից են Ախուրյանը, Արփան, Ողջին,
3. սկիզբ է առնում Ծաղկանց լեռներից,
4. համարվում է «կամուրջներ չհանդուրժող գետ»:

15. ՀՀ ո՞ր մարզում է գտնվում Շիկահողի արգելոցը.

1. Վայոց ձորի
2. Արարատի
3. Տավուշի
4. Սյունիքի

Կարճ պատասխանով առաջադրանքներ

16. Աֆրիկայի Տրիպոլի և Լուանդա քաղաքները գտնվում են նույն միջօրեականի (արլ. ե. 14°) վրա: Տրիպոլին գտնվում է հս. լ. 32°-ի, իսկ Լուանդան՝ հվ. լ. 9°-ի վրա: Որոշել քաղաքների միջև եղած հեռավորությունը կիլոմետրերով:

17. Օդի բացարձակ խոնավությունը 10գ/մ³ է, իսկ այն հագեցնելու համար անհրաժեշտ է 20 գ ջրային գոլորշի: Որոշել օդի հարաբերական խոնավությունը (%):

18. Երկրի բնակչության թիվը 2 400 000 է, իսկ բնակչության միջին խտությունը՝ 50 մարդ/կմ²: Որոշել երկրի տարածքը (կմ²):

19. Լեռան ստորոտին մթնոլորտային ճնշումը 700 մմ է, իսկ գագաթին՝ 300 մմ: Որոշել Լեռան հարաբերական բարձրությունը:

20. Երկրում ցորենի ցանքատարածությունների մակերեսը 4 մլն հեկտար է, իսկ համախառն բերքը՝ 8 մլն տոննա: Որոշել ցորենի միջին բերքատվությունը (տ/հա):